ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
«ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ»
№ COP 17-ԾՁԲ-26/01 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «19» «08» 2026 թ.

Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն ի դեմս՝ կոմիտեի նախագահ Դավիդ Թավադյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), և որի անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս Կոմիտեի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետ Լիլիթ Գևորգյանը (նույնականացման քարտի համար՝ 014388516, տրված 31.01.2023թ, 001-ի կողմից),մի կողմից, և «Մերիդիան հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերությունը (ՀՎՀՀ 0261409, գտնվելու վայրը ք. Երևան, Ոսկերիչների փ, հ 1), որի անունից հանդես է գալիս տնօրեն Սամվել Մանուկյանը (ծնված 06.01.1952թ, անձնագրի սերիա՝ AU0290088, տրված 01.06.2021թ, 011-ի կողմից, հասցե ք. Երևան, Բրյուսովի փ, շ 23, բն 18) (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (միասին հիշատակելիս այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի օգոստոսի 13-ի թիվ 1221-Ն որոշմամբ և Կողմերի միջև 2025 թվականի սեպտեմբերի 25-ին կնքված № COP 17-ԾՁԲ-26/01 «Ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի» (այսուհետ՝ Պայմանագիր) 12.1–ին կետով, Կողմերը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր N 2) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅԱՆԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրի 1.2 կետում «համապատասխան տարածքները (այսուհետ նաև՝ Տարածք)» բառերը փոխարինել «ամբողջ տարածքը (այսուհետ նաև՝ Տարածք) ՝ ըստ Պատվիրատուի հայեցողության, այդ թվում՝ նաև այն տարածքները» բառերով:

1.2. Պայմանագրի 1.3.2 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «COP 17-ի անցկացման ավարտից հետո հաջորդող 8 տարվա ընթացքում՝ առավելագույնը 400 օրացուցային օր, 4 775 000 000 (չորս միլիարդ յոթ հարյուր յոթանասունհինգ միլիոն) ՀՀ դրամին համարժեք՝ Տարածքի տրամադրման ծառայություն հետևյալ պայմաններով.»:

1.3. Պայմանագրի 1.3.2.6 կետում «6 տարվա» բառերը փոխարինել «8 տարվա» բառերով:

1.4. Պայմանագրի 1.3.2.7 կետում «առավելագույնը երկու հարյուր օրացուցային օր» բառերը փոխարինել «առավելագույնը չորս հարյուր օրացուցային օր» բառերով, իսկ «6 տարվա» բառերը՝ «8 տարվա» բառերով:

.5. Պայմանագրի 1-ին կետը լրացնել 1.3.2.8 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «1.3.2.8 Պատվիրատուն COP 17-ի անցկացման ավարտից հետո հաջորդող 8 տարվա ընթացքում իրավունք ունի Պայմանագրի 1.3.2 կետում նշված 400 օրացույցային օրերի սահմաններում Տարածքն իր հայեցողությամբ տրամադրել երրորդ անձանց տիրապետմանը և օգտագործմանը, այդ թվում հատուցելի եղանակով»:

1.6. Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «3.1 Պայմանագրի 1.2-րդ կետով նախատեսված Ծառայությունների արժեքը ընդհանուր կազմում է 7 931 566 700 (յոթ միլիարդ ինը հարյուր երեսունմեկ միլիոն հինգ հարյուր վաթսունվեց հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:»:

1.7. Պայմանագրի 4.17 կետում «մինչև երկու հարյուր օրացուցային օր» բառերը փոխարինել «մինչև չորս հարյուր օրացուցային օր» բառերով:

1.8. Պայմանագրի 4.18 կետում «հավասարվում է երկու հարյուրի» բառերը փոխարինել «հավասարվում է չորս հարյուրի» բառերով:

1.9. Պայմանագրի մնացած բոլոր դրույթները (այդ թվում՝ 1 քառ. մ-ի օրական արժեքը, նվազագույն քառ. մ պահանջի բացակայությունը, փաստացի օգտագործվող տարածքի սկզբունքը, հարակից ծառայությունների ամորտիզացման կարգը, երեսուն աշխատանքային օր առաջ ծանուցելու պարտականությունը), մնում են անփոփոխ և կիրառվում են ամբողջությամբ՝ ներառյալ Պայմանագրի 1.3.2 կետով Համաձայնագիր N 2-ով ավելացված լրացուցիչ օրերի և գումարի նկատմամբ:

1.10. Պայմանագիրը լրացնել նոր՝ 3.2.1 կետով՝ հետևյալ խմբագրությամբ. «3.2.1 Պայմանագրի 3.1 կետով սահմանված Ծառայությունների արժեքի՝ Համաձայնագիր N 2-ով ավելացված մասը՝ 2 000 000 000 (երկու միլիարդ) ՀՀ դրամը, Պատվիրատուն Կատարողի անունով բացված հատուկ հաշվին է փոխանցում որպես լրացուցիչ կանխավճար՝ Համաձայնագիր N 2-ը ուժի մեջ մտնելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողի կողմից Համաձայնագիր N 2-ի կատարումն ապահովող համապատասխան բանկային երաշխիք ներկայացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Պայմանագրի 3.2 կետով սահմանված կարգով Պատվիրատուի կողմից արդեն վճարված՝ Պայմանագրի սկզբնական՝ 5 775 000 000 (հինգ միլիարդ յոթ հարյուր յոթանասունհինգ միլիոն) ՀՀ դրամի կանխավճարը համարվում է պատշաճ և ամբողջությամբ կատարված պարտավորություն և կրկնակի (կրկին) վճարման ենթակա չէ:»:

2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Համաձայնագիր N 2-ով չփոփոխված մասով Պայմանագրի բոլոր դրույթները մնում են ուժի մեջ և կիրառելի են անփոփոխ՝ ներառյալ, մասնավորապես, Պայմանագրի 1.7, 1.8, 2.2, 2.5, 4.8, 4.13 և 8-րդ կետերով սահմանված պատասխանատվության, միակողմանի լուծման և կանխավճարի վերադարձի կանոնները, որոնք համապատասխանաբար կիրառվում են նաև Համաձայնագիր N 2-ով ավելացված գումարի և օրերի նկատմամբ:

2.2. Համաձայնագիր N 2-ը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Համաձայնագիր N 2-ն ուժի մեջ է մտնում նոտարական վավերացման պահից:

2.3. Համաձայնագիր N 2-ի նոտարական վավերացման և դրանից բխող՝ սահմանափակումների պետական գրանցման փոփոխության հետ կապված ծախսերն իրականացվում են Կատարողի միջոցների հաշվին՝ Պայմանագրի 14.2 կետին համապատասխան:

2.4. Համաձայնագիր N 2-ը կազմված 3 էջից և կնքված է հայերեն լեզվով՝ 4 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատվիրատու

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե

ՀՎՀՀ՝ 02528489

բանկը՝ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

հաշվեհամարը՝ 900011059814

հասցեն՝ ք. Երևան, Տիգրան Մեծի պող., 4

անուն, ազգանուն՝ Դավիդ Թավադյան

Восстановимая подпись

X

ստորագրություն՝ Подписано: TAVADIAN DAVID 1807760715

Կատարող

«Մերիդիան Հոլդինգ» ՓԲԸ

հասցեն՝ ք. Երևան, 0015, Կենտրոն, Ոսկերիչների փողոց հ. 1

ՀՎՀՀ՝ 02621409

բանկը՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ

հաշվեհամարը՝ 1930097169890100

անուն, ազգանուն՝ Սամվել Մանուկյան

ստորագրություն՝

ռական ակտի կոդ: 520-20260819-117-10441617
արական ակտի գաղտնագիր: L93VVX

Երկու հազար քսանվեց թվականի օգոստոսի տասնինը

սույն համաձայնագիրը վավերացվել է իմ՝ Հայաստանի Հանրապետության ԵՐԵՎԱՆ նոտարական տարածքի նոտար ԷԼՄԻՐԱ ԳԵՎՈՐԳԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՍ կողմից: Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը և գործունակությունը ստուգված են:

Գրանցված է գրանցամատյան թիվ՝ 19323 ---------- ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տաս հազար ՀՀ դրամ, որը չի ներառում ավելացված արժեքի հարկը՝ 20% ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Էլմիրա Գևորգի Դանիելյան